BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE - ST. LAZARE

№ 264 ՇԱԲԱԹ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1915 ՇԱԲԱԹ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 264

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул. № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՑ **1916** Թ. ՀԱՄԱՐ

(Գ 5-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	Այնուհետեւ ամսական
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	Մէկ ռուբլի։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վաղը, կիրակի, Նոյեմբերի 29 ին, Վանքի աւագ եկեղեցւում, պատարագից յետոյ տեղի կունենայ հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

յիշատակին. արա մասին ծանուցանում են հանգուցեալի աշակերտներն ու յարգողները։

885. 1—1

Արգար Միքայէլեան, Նուարդ Խաչատրեան և Կատարինէ Դարչեան Արարատեանցները հոգեկան խորին վշտով յայտնում են՝ առաջինն իր մօր, իսկ վերջիններն իրանց սկեսրոջ՝

ՈՎՍԱՆՆԱ ԱՐԱՐԱՏԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Նոյեմբերի 25-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքն այսօր, շաբաթ, երեկ. ժամը 6-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից (Կրասնօգորսկայա փող. № 18) դէպի ս. Մինաս եկեղեցին (Հալաբարում)։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

863. 1—1

Վշտաբեկ Աբիհայաթ-խանում, Ղահրաման և Սմբատ Մելիք-Ստեփանեանները յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանգագին դստեր, իսկ վերջիններն իրանց անմոռանալի քրոջ՝ անգութ մահվան շնորհիւ վաղաժամ վախճանված

ՎԱՐՍԵՆԻԿ ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

թաղման մասին, որ տեղի կունենայ կիրակի, Նոյեմբերի 29-ին, Առաջաւոր գիւղում (սեփ. կալուած), ուր և տոհմական դամբարանում կամփոփվի հանգուցեալի մարմինը։

862. 1—1

Լօռու գործակալ Արիստակէս քահ. Աբովեանը իր կնոջ և զաւակների հետ և Սարգիս Աբովեանը խորին վշտով յայտնում են՝ առաջիններն իրանց սիրասուն դստեր, վերջինս իր եղբօր աղջկայ՝ գիւղական քոյր, ուսանողուհի

ԱՇԽԷՆ ԱԲՈՎԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 26-ի գիշերը։ Ամբիծքը տեղի կունենայ շաբաթ երեկոյեան ժամը 7-ին, Մոդնու ս. Գէորգ եկեղեցում։ Պատարագը տեղի կունենայ նոյն եկեղեցում կիրակի, առ. ժամը 11-ին։ Թաղումը Վէրայի գերեզմանատունը։

Դասաւորող կայանի ծառայողները վշտահար սրտով յայտնում են գիւղական քոյր՝ օրիորդ

ԱՇԽԷՆ ԱԲՈՎԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ Նոյեմբերի 26-ին. օրիորդը Պետրոգրադի հոգեւորդրաբանական ինստիտուտի 3-դ կուրսի ուսանողուհի էր. նա զոհ գնաց գաղթականների սանիտարական գնացքը ուղեկցելիս բծաւոր տիֆից վարակվելուց։ Նոյեմբերի 28-ին կայանում տեղի կունենայ, ժամը 1-ին, հոգեհանգիստ։ Թաղումը՝ կիրակի, Նոյեմբերի 29-ին։

ԾՆՆԴԵԱՆ ԸՆԾԱՆԵՐ ՋԻՆԻՈՐՆԵՐԻՆ

Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունքին կից կազմված է Ցանձնաժողով, որի պարտականութիւնն է հաւաքել ԸՆԾԱՆԵՐ ՋԻՆԻՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

ՈՒՂԱՐԿԷՔ **ՓԻՍԱ-ՏՈՊՐԱԿՆԵՐ**

ընծաներով։ Ցանկալի է՝ սապոն, ծխախոտ, գլանակ, թէյ, շաքար, ասեղ, թել, ծրարներ, թուղթ, մատիտ, չոր քաղցրեղէն, չորացրած մրգեղէն, տաք հագուստեղէն և այլն։

Բոլոր ընծաները անմիջապէս կուղարկվեն պատերազմական դիրքերը Քաղաքների Միութեան յատուկ լիազօրի միջոցով։

Ընծաները հասցէագրել Ցանձնաժողովի հետեւեալ անդամներին.

1) Լ. Ն. ԼԵՐԵԴԻՆՍԿԱՑՑԻՆ (Օլգինսկայա փող. № 47, տէլ. 11—94)։
2) Գ. Ա. ՊԻԼԱՑԻՆ (Տատիանինսկայա փող. № 10, տէլ. 15—39)։
3) Ն. Ա. ԲՈՒՏԿԵՎԻՉԻՆ (Օլգինսկայա փող. № 3, բն. 3, տէլ. 16—58)։
4) Ա. Ա. ՉԻՐՆՕՅԻՆ (Տեխնիչեսկայա փող. № 2, տէլ. 5—73)։
5) Լ. Ե. ԵՐՄՕԼԱԵՎԱՅԻՆ (Զուբալօվսկայա փող. № 13)։
6) Ե. Ա. ԲԻԼՕՅԻՆ (Բրօսսէ փող. № 3)։
7) Օ. Ս. ԲՈՒԿՇՏԷՅՆԻՆ (Օլգինսկայա փող. № 6, տէլ. 5—55)։

ԿԱՐԵԼԻ Է ՏԵՂԵԼՖՕՆՈՎ ԽՕՆԴԲԵԼ՝ ՄԱՐԴ ՈՒՂԱՐԿԵԼ ՏՈՊՐԱԿՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ.

Դասարկ քիսա-տոպրակներ կարելի է ստանալ Ն. Ա. Բուտկեվիչից (Օլգինսկայա փող. № 3, բն. 3, տէլ. 16—58)։

Կարելի է ուղարկել եւ անուանական տոպրակներ։

Կարելի է ընծան դրամով ուղարկել, այն է՝ 1 ռուբլի, որով Ցանձնաժողովը կը պատրաստէ լիքը տոպրակներ։

Համառաւ. Քաղաք. Միութեան Կովկասեան Բաժանմունքի լիազօր՝ Ալ. ԽԱՏԻՍԵԱՆ
Ցանձնաժողովի նախագահ՝ ԲՈՒԿՇՏԷՅՆ

առ. (օ. մ.) 860. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

ԱԻԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է և գիտութիւն ալ. ալ. անդամների և կանդիդատների, որ համաձայն ժողովարանի կանոնագր. § 15-ի, 1916 թ. անդամակցութեան տոմսակ ստանալու վերջնական ժամանակամիջոցը լրանում է դեկտեմբերի 14-ին ս. թուին։ Այն անդամներն ու կանդիդատները, որոնք չեն վերանորոգի իրանց տոմսակները մինչև դեկտեմբերի 15-ը՝ կը համարվին ժողովարանից կամովին հեռացած, սակայն մի տարվայ ընթացքում կարող են նորից անդամագրվել՝ վճարելով 24 ռուբլի, իսկ անդամների ազատ տեղ չը լինելու դէպքում կը համարվին այդպիսիները կանդիդատ։ Տոմսակ ստանալու ժամանակ անդամները և կանդիդատները պարտաւոր են հանձնել իրանց պարտքերը, որոնք արձանագրված կը լինեն ժողովարանի գրքերում, հակառակ դէպքում՝ տոմսակներ չեն տրվի։ Գրասենեակը բաց է ամեն օր՝ երեկոյեան ժամը 8—11։

առ. (6, 13) 852. 3—1

ԽԱԹԱԲԱԼԻՍՏՆԵՐ, կարդացէ՛ք այսօր

„ԽԱԹԱԲԱԼԱ“

Ցրէչները թերթը ստանում են խմբագրատանը ուղիղ ժամը 12-ին՝ Դվօրցովայա փողոց, տուն 5, Վրաց ժողովարանի և թատրոնի դաւթում։

առ. 861. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, շաբաթ, Նոյեմբերի 28-ին
Հայ Դրամատ. Արտիստների
Ընկերակցութիւնը
Կը ներկայացնէ

ՓՈՔՐԻԿ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պիէս 4 գ., Բրակկօյի, թարգ. Ա. Եղեկեանի։ Մասնակցում են՝ տ. տ. Զաբէլ, Սիրանոյշ, Սեւումեան, պ. պ. Ագեան, Ալիխանեան, Սուրաբեան, Սեւումեան։

Սկիզբն է երեկ. ժամը 8-ին.

Տոմսակները 50 կ-ից մինչև 1 ր. 25 կ.։
Ռեժիսսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ Կլուբի մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ։

855. 1—1

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Թոքատցի Ցարութիւն Մրսրրեան, որ Սամսոնէն Բաթում գալով՝ Սուխում մեկնած է, իսկ հիմա տեղը անյայտ։ Սոյն անձը ճանչցողներէ և տեղը գիտցողներէ կը խնդրուի բարի լինել հետևեալ հասցէին լուր տալ.

Բաթում, Գէորգ Ագըլեան
Լորիս-Մելիքովսկայա ուլիցա № 35.

առ. 864. 3 1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ մանրի, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն եւ ստացիոնարներ հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Ցարութիւնեան
Ե. Ն. Վեսելովսկի
Լ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Ե. Ն. Տէր-Ներսէսեան
Լ. Ռ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(հ. կ.) առ. 742. 100—14

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ուսումնական Բերլինի համալսարանի պրոֆ. Պօղնէրի

Ընդունում է հիւանդներին Միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սօլօլակ, Բարիշեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տէլէֆօն 10—58.

առ. (չ. ու. կ.) 806. 50—10

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նաւաբեան

(Մանուպէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանգստեան ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։

Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (երբ. ժ. 4—6.

Հասցէն՝ Սօլօլակ, Բարիշեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

(ե.հ.կ.) առ. 634. 100—33

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՈՒՆ

(Զուբալօվի անուան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ

Խմբակցութիւնը
Վաղը, կիրակի,
Նոյեմբերի 29-ին
Կը ներկայացնէ

ԺԱՅՌ

Դրամա 4 գործ., Վ. Փափազեանի.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—օր. օր. Արմէն, Արփենի, տ. տ. Պալեան, Ցասմիկ, պ. պ. Աղաբաբեան, Գաւրօշ, Գօրանչեան, Բագրատունի, Երամեան, Ղանտաղչեան, Մարութեան, Միքայէլեան, Օհանեան, Սերժ և ուրիշներ։

Սկիզբն է երեկ. ժամը 8-ին։

Տեղերի գները 4 կ. մինչև 50 կ.
Ռեժիսսեօր՝ ԱՄՈ-ԽԱՐԱԶԵԱՆ

Վարչութեան հերթապահ անդամ՝
Ն. ԱՄԻՐԱՂԵԱՆ

առ. 865. 1—1

Կիրակի, Նոյեմբերի 29-ին առաւօտեան

„ԱՊՕԼԼՕ“ ԹԱՏԵՐԱՍԱՐԱՀՈՒՄ

(Անկիւն Միքայէլեան և Պիրագօվեան փ.)

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Հրատարակչական Ընկերութիւնը
Կազմակերպում է

ՄԱՆԿԱԿԱՆ ՍԻՆԷՄԱՏՕԳՐԱՖ

Բազմապլիսի ծրագրով.

I սէանսը սկսվում է ժ. 12-ին, II սէանսը՝ ժամը 1½-ին։

Տոմսակները գներն են՝ 15, 20, 30, 40 և 50 կոպէկ։

Տոմսակները կարելի է ստանալ «Հասկերի» խմբագրատանը՝ Սերգիեվսկայա փ. № 20 և հանդէսի օրը՝ «Ապօլլօյի» կասսայում։

առ. 853. 3—3

Ռեալիեի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաեւ խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՍՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱԿՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ԲԵՆԶԻՆԵՆՆ ԶԱՆԹՑԻՆ ԶԱՌԱՊԿՈՒՑԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՈՒՐՈՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская, 23, тел. 7-29.

առ. (ա. օ.) 504. 100—98

ԲԺԻՇԿ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի ականջի հիւանդութիւններով։

Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։

Бебутовская ул. № 26. 3 рд օրիորդաց գիմնազիայի կողքին։

առ. 779. 50—26

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր

ԲԺՇԿՈՒՀԻ

ՍՕՖԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ

ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիեվսկայա փող. № 1. Տէլէֆօն № 16—67։

առ. 753. 50—33

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

յիշատակը յաւերժացնելու համար նրա աշակերտների և յարգողների կողմից նշանակված է ժողով Գայիանեան գպրոցում այսօր առաւօտեան ժամը 11-ին։

առ. 859. 1—1

ԱՏԱՄՆԱԲՈՒԾԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻՍ

ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լիրմօնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։

(ա. օ.) առ. 515. 100—82

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է մէկ և կէս թերթից։

«Մշակը» այժմ տպվում է նոր ձուլված տառերով։ Առաջիկայ յունվարից «Մշակը» կը տպվի իր սեփական տպարանում, ուստի և հնարաւորութիւն կունենայ յաճախ տալ մէկ և կէս թերթ, գուցէ նոյնիսկ մեծացնել թերթը։

Առաջիկայ 1916 թ. «Մշակին» կաշխատակցեն հայ հրապարակախօսութեան և գրականութեան նոյն կարող ոյժերը, որոնք աշխատակցեցին այս 1915 թ. ընթացքում։ Այդ անունները լաւ ծանօթ են, և մենք հարկ չենք տեսնում որևէ բէկլամի։

ՍԽԱԼ ԴԱՂԱՓԱՐ

Այն միտքը, որ «Մշակի» № 261-ի մէջ արտայայտեց մեր աշխատակից Դ. Անանունը իր «Հայութեան ազգային վարկը» վերնագրով գեղեցիկ յօդուածի մէջ, արժանի է որ գրաւէր աւելի լուրջ ուշադրութիւն։

«Մշակը» իր գոյութեան ամբողջ ընթացքում երբէք չէ խնայել մարակել այն թերութիւնները, ախտերը, որոնք արմատացած են հայ ժողովրդի այս և այն խաւի, այս և այն դասակարգի մէջ։ քիչ չէ մտրակվել և նոյնիսկ անխնայ, վաճառական դասակարգը. բայց նա ընաւ չէ դադարել երևան հանելու և այն ծառայութիւնները, արժանիքները, որ ցոյց է տուել հայ վաճառականը իբրև մի կարևոր գործօն հայ ժողովրդի ոչ միայն քաղաքակրթական, տնտեսական զարգացման տեսակէտից, այլև նրա քաղաքական զարգացման գործի մէջ։ Որովհետև այն դերը, որ օտար ազգութիւնների մէջ խաղացել են ազնուական, արիստոկրատ, կալուածատէր դասակարգերը, հայ ազգի կեանքի մէջ խաղացել են հոգևորականութիւնը և վաճառականութիւնը. այն օրից, երբ նա կորցրեց իր քաղաքական անկախութիւնը։ Եւ ինչ որ էլ կամենանք ասել, բայց ակնյայտնի պատմական ճշմարտութիւն է, որ հայ լեզուի, հայ հոգի, հայ գրականութեան պահպանութեան համար մեծ աշխատանք են գործ դրել և մեծ ծառայութիւններ մատուցել հայ հոգևորականը և հայ վաճառականը իրանց ճկուն, աշխատէր, ժամանակի պայմաններին և դժնդակ հանգամանքներին յարմարվող յատկութիւններով։ Օտար ազգերը, հարևան ժողովուրդները տեսել են հայ վաճառականի մէջ միայն նրա վատ, չարչիական բնոյթ ունեցող կողմերը. նրանք չեն նկատել և չէին էլ կարող նկատել նրա արդիւնաբերող, արտադրող կողմը, այն մեծ արժէքը, որ նա ներկայացնում էր։ երբ, շնորհիւ իր խնայողութեան, իր ձեռներէց ոգուդիզած հարստութեան, նա մի կողմից կարողանում էր մեղմացնել երկրագնդիս բռնակալների կողմից հայ ժողովրդի գլխին անպատմելի թափվող հարուածները, միւս կողմից կարողանում էր վառ պահել իր ազգային հատկութիւնները, շէնացնել նրանց, նպաստել հայ լեզուի, հայ գրի, հայ տպագրութեան, հայ արուեստի ծաղկման։

Եւ ինչու միայն մենք հայերս ևս հայ վաճառականի մէջ պէտք է տեսնենք և նկատենք միայն նրա չարչիական, գծուծ կողմերը. մթթել այդպիսի գծուծ կողմեր քիչ կան միւս դասակարգերի մէջ, որոնք ունեն և ուրիշ թեր-

բութիւններ—շռայլութիւն, յումպէտս վատնումն նիւթական և բարոյական ոյժերի, արհամարհանք դէպի հասարակ ժողովուրդը, օտարամոլութիւն և այլն։

Եւ այսօր, երբ հայ վաճառականը ոգեհետ դառնում է մեծ արդիւնաբերական ոյժ. այսօր, երբ բոլոր քաղաքակիրթ ազգերի նոյնիսկ ամենաբարձր դասակարգերը ձգտում են դառնալ նոյնպէս վաճառական ու արդիւնաբերող տարր. այսօր, երբ առաջին խօսքը կուլտուրայի աշխարհում արդիւնաբերութեանն է պատկանում,—վեր կենալ և ասել, թէ մենք պէտք է աշխատենք ուժասպառ անել վաճառականութիւնը, թոյլ չը տալ նրան այլ ևս գործելու, դա աւելի քան քաղաքական տգիտութիւն և անմտութիւն է։

Ոչ։ վաճառականութիւնը, իբրև տընտեսական-արդիւնաբերական ոյժ, անագին դեր է խաղում այսօր աշխարհում և կարող է խաղալ նաև մեր մէջ և շատ պիտանի, գործօն ոյժ լինել. հարկաւոր է միայն վերակազմել այդ ոյժը այնպէս, որ նա, այդ առևտրա-արդիւնաբերական ոյժը, ներդաշնակվի հայութեան ազգային մարմնի հետ, ունենայ այն ոգին և ուղղութիւնը, ինչ որ ունէին հայ վաճառականութեան նախահայրերը՝ Խոջա Սաֆարները, Լազարեանները, Էմինները, Ռաֆայէլ Մուրադները, Խալիբները և այլք։

Բայց մեր գլխաւոր ցաւն էլնց այն է, որ հայ առևտրա-արդիւնաբերական դասը շատ քիչ է հետաքրքրվում այժմ իր ազգային և հասարակական հարցերով, չէ ցաւում, չէ տանջվում ժողովրդի ցաւերով, վշտերով և կարիքներով։

Ուրեմն մեր գլխաւոր պարտքը պէտք է լինի օգտվել այդպիսի մի պատեհաւոր ոյժից, որպիսին հայ առևտրա-արդիւնաբերական դասակարգն է և ուղղել նրա գործունէութիւնը դէպի ժողովրդական-հասարակական և ազգային ծառայութեան ուղին։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

— o —

ԹՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՐԵՍ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 Նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Դերազոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատում Չեմբերլէնը յայտնեց, որ Կտէդիֆօնի շրջակայքում կուռող անգլիական զօրքերի կորուստները կազմում են 643 սպանված և 3330 վիրաւոր։ Բացի այդ՝ պակասում են կրկին 594 հոգի։ Համաձայն վերջին հաղորդագրութիւնների, նահանջի ժամանակ անգլիացիք կորցրել են ընդամենը 300 մարդ։ Չեմբերլէնը մեծ գովասանքով է խօսում անգլիական զօրքի վարքի մասին։

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՌԱԶՄԱՐԵՍ

(Պետ. Հեռ. Գործ.)

25—26 Նոյեմբերի

ՊԱՐԻԶ.—Նոյեմբ. 23-ի երեկոյեան բոլգարները ուժեղ յարձակում գործեցին Դէմիրկավուի մօտ մեր դիրքերի դէմ։ Յարձակումը վանվեց։

Նոյեմբերի 23-ի առաւօտը հանգիստ անցաւ ամբողջ զօրաճակատի վրա։

ԱԹԷՆՔ.—Բալանդօվօ-Ստրումիցա շրջանում կռիւը վերջացաւ յօգուտ դաշնակիցների։ Ֆրանս-անգլիական արիւերիան բառնիս բուն նշանակութեամբ ամրացրեց բոլգարների շարքերը, որոնց կորուստները սպանվածներով և վիրաւորներով շատ խոշոր են։ Կռիւը ղեկավարում էին գէներալներ Բայիւն և Սիկօլը։ Բոլգարները ստանալով օգնութիւն՝ երէկ մեծ կատաղութեամբ յարձակում գործեցին դաշնակիցների դէմ Դէմիրկավուի շրջանում։ Բոլգարներին նպատակն է ճեղքել Զիմլիի զօրաճակատը և ձեռք ձգել Ստրումիցա կայարանը։ Բոլգարները ըստ երևոյթին հրաժարվել են սերբերին Ալբանիայում հետապնդելուց, որպէսզի խոշոր ոյժերով գործեն դաշնակիցների դէմ։ Կռիւը շարունակվում է։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱՐԵՍ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 Նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Դերազոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Բիգայի զօրաճակատի գանազան տեղերում մեր արտիլէրիան աջողութեամբ գործում էր հակառակորդի մարտկոցների դէմ և ստիպեց նրանց լռել։

Իկսկիւլից դէպի հարաւ գերմանացիք խեղդող գազ թողին մեր խրամատների ուղղութեամբ։

Դվինսկի զօրաճակատի վրա գերմանական մի զօրամաս փորձեց մի քանի անգամ դուրս գալ իր խրամատներից, բայց մենք թոյլ չը տուինք հրացանաձգութեամբ։

Մնացած ամբողջ զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Ամբողջ զօրաճակատի վրա թշնամու արտիլէրիան ուժեղացրեց իր գործունէութիւնը։ Մեր հրետանիները պատասխանում էին աջողութեամբ։ Հակառակորդը լայն չափով գործադրեց խեղդիչ գազեր։ Թշնամու հետիոտն գնդերը նոյեմբերի 23-ին սաստիկ թնդանօթաձգութիւնից յետոյ յարձակում գործեցին մեր դիրքերի վրա Լէնդրօ և Պիացցօ շրջանում, բայց յարձակումները վճռապէս վանվեցին։ Կարսօյում մեր զօրամասերը շարունակում են առաջանալ։ Սան-Միկելէ շրջանում մենք ձեռք ձգեցինք թշնամու մի ամուր դիրք և գերեցինք 146 աւստրիացի, ձեռք ձգեցինք մեծ թիւով հրացան ու զանազան ռազմանիւթեր։

ՊԱՐԻԶ.—Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում, Լօօս և Ժիվանշի շրջաններում, Սօմմայի և Ուազի միջև շարունակվեց թնդանօթաձգութիւն։ Շամպանիում մեր արտիլէրիան եռանդով պատասխանում էր թշնամու կրակին։

Սուէշն բլուրի մօտ շարունակվեց կռիւը ձեռքի ռումբերով. այդտեղ մենք առաջանում ենք։

Արգոնների և Մասսի միջև մեր հրետանիները աչնչացրին թշնամու խեղդող գազերի պահեստները։

Մեր աէրօպլանի արձակած գնդակից թշնամու աէրօպլանի մէջ պայթում առաջացաւ։ Երկու օդաձգներն ընկան Տիլլուայի մօտ մեր զօրքերից ոչ հեռու։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

25—26 Նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը ամենակարճ ժամանակամիջոցում մտադիր է առաջարկութիւն ներկայացնել բարելաւելու երկաթուղային բոլոր այն ստորին ծառայողների նիւթական դրութիւնը, որոնց ռոճիկները պատերազմի ժամանակ չեն աւելացվել։

Մերժվեց օրինականացնել Պետրօգրադի պարբերական մամուլի հրատարակիչների ընկերութիւնը ձևական պատճառներով։

ՆԻՒ-ՅՕՐԿ.—«Իվնինգ Պոստին» հաղորդում են Վաշինգտօնից, որ Մէյնցիալ Պետութիւնները աւստրիական կառավարութիւնից, «Անկոնա» շոգենաւը ընկղմելու հարցի առիթով, պահանջում են ամբողջապէս սկզբունքով հրաժարվել նաւեր ընկղմելուց, պատժել սուլթանաւի հրամանատարին, լայն չափով վարձատրել վնասված ամերիկացիների ընտանիքներին և տալ երաշխիքներ, որ այդպիսի դէպքեր չեն կրկնվի ապագայում։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ. — Վիէննայից հեռագրում են, որ 1872, 1873, 1874 և 1896 թ. թ. լանդշտուրմի տղամարդ զէնքի կանչելը յետաձգվել է մինչև դեկտ. 3-ը։

«Курьеръ Львовскій» լրագիրը յայտնում է, որ Լվովում ընդարձակ չափով տարածված է ծաղիկ հիւանդութիւնը։

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատում Սնօուդէնը դիմեց Ասկվիտին խնդրելով վկայել թէ հաշտութեան բանակցութիւնների մասին եթէ որևէ առաջարկ լինի կուռող պետութիւններից մէկի կողմից չէզոք երկիրների միջոցով՝ չի մերժվի առանց պարլամենտի գիտութեան։

Ասկվիթը պատասխանեց, որ Մեծ-Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Եապոնիայի կառավարութիւնները պայմանաւորվել են չը կնքել անջատ հաշտութիւն, իսկ եթէ թշնամի երկրների կառավարութիւնները ուղղակի կամ չէզոք երկրների միջոցով լուրջ առաջարկութիւն անեն ընդհանուր հաշտութիւն կնքելու մասին, այդ առաջարկութիւնը հարկաւ նախապէս կը քննեն դաշնակից կառավարութիւնները։ Մինչև այդ տեսակ բան նա ոչ մի ուրիշ խոստումներ չէ կարող տալ։ Եթէ որևէ մէկը առաջարկութիւն ուղղէ հաշտվելու մասին, կառավարութիւնը անպայման իրազեկ կանչ այդ մասին պարլամենտին, եթէ այդ հնարաւոր երևայ։

ԱԹԷՆՔ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ նոյեմբ. 27-ին զէնքի են կանչվում 1916 թ. երիտասարդները ինչպէս մահմեդականներից, այնպէս և քրիստոնեաներից։ Այդպիսով ստացվելու է 130,000 մարդ։

Նանէնայից հաղորդում են, որ զինաւորական դպրոցի 600 սաներ, նաև մի քանի վիրաւոր սերբ օֆիցէր փախել են Կօրիցա։

ԳՐՈՒԹԻՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Ծեփ. Թղթակից)

Թաւրիզ, 22 Նոյեմբերի

Թէհրանից ստացվում են յուզիչ լուրեր. շահի կառավարութիւնը նորից թեքվում է Թիւրք-գերմանացիների կողմը։ Կում նուիրական քաղաքում գործում է «երիտասարդ-պարսիկների» յեղափոխական կոմիտէն, որի անդամները գերմանական ոսկիներով յըղփացած էին։

Կումի, Սպահանի և այլ տեղերի հայերը վտանգի մէջ են։ Սակայն ռուսական զօրքը կը գսպէ խռովութիւնները։

(Պետ. Հեռ. Գործ.)

26 Նոյեմբ.

ԹԷՀՐԱՆ.—(Ճեպընթաց)։ Մինիստրական տեղեկութիւն ստացաւ, որ մեր զօրքերը յաղթութիւն են տարել Համադանի ուղղութեամբ։

Հակառակորդը, թիւով 500 հեծեալ ու հետիոտն ապստամբ ժանդարմներ և Գերմանիայից ու Թիւրքիայից վարձկան մօտ 1200 հոգի երկու թնդանօթներով ու մի գնդակացիրով, ետ մղվեց, կորցնելով մեծ թիւով սպանված և վիրաւոր։

Մեր զօրքերը դրաւել են կարևոր դիրք Ավէ քաղաքի շուրջ, որտեղից շարունակում են առաջանալ։

ԹԷՀՐԱՆ.— Սպահանից շարունակվում են ստացվել լուրեր, թէ փոխադարձ դժգոհութիւն է տիրում բախտիարների և գերմանական կողմնակիցների միջև վերջինների սանձարձակ գործողութիւնների պատճառով, որոնք երբ թէ սրբազան պատերազմի օգտին գրաւում են ձեռք ընկածը։ Այդօրինակ վէճ-երկպառակութիւնները, Կումի կոմիտէի մէջ տիրող անհամաձայնութեան և Թիւրքաց դեսպանի ու պրինց Ռէյսի միջև համերաշխութեան բացակայութեան հետ, սկսում են անդրադառնալ Գերմանիայի և Թիւրքիայի տեղական յարգողների տրամադրութեան վրա։ Սակայն ցեղերի ու հրոսակախմբերի առանձին պարագլուխները յարմար առիթ են ստացում սկսելու կողոպուտներ, պատրաստ են պահում իրանց, որոնցից յոյս ունեն օգտվել մեր հակառակորդները։ Այդպիսի դրութեան հանդէպ է, որ կառավարութիւնը տատանվում է և Պարսկաստանի բանակցութիւնները Ռուսաստանի և Անգլիայի հետ ձգձգվում են։

Բումբէյից մեզ գրում են հետևեալը.

«Կ. Պոլսից եկողները պատմում են, որ այնտեղ հրատարակվում է «երիտասարդ-պարսիկների» (սա նոյնպիսի պարսկական կուսակցութիւն է, ինչպէս երիտասարդ-Թիւրքերինը) օրգան «Ծավէրը», որ մեծ հրճուանք է արտայայտում Յովհաննէս խան Մասեհեանի պաշտօնազրկութեան և նրա տեղ Հուսէյն-Ղուլի խան Նաւաբի նշանակման մասին։ Կ. Պոլսի պարսից դեսպան միրզա Մահմուդ-խանը, Զինթիշամ-ուս-Սալթանէն տիտղոսով, որ Յովհաննէս խանից առաջ Բերլինի դեսպան էր և պարսկական առաջին մէջլիսի նախագահ, մի մեծ բանկէտ է տուել ի պատիւ գերմանացի ֆելդմարշալ Գոլց վաշայի։ Այդ բանկէտին մասնակցեցին Էնվէր-փաշան, Թալէաթ-բէյը և բոլոր ակնառոյ Թիւրք և գերմանացի պաշտօնեաները, և արտասանված ճառերի մէջ սաստիկ գովաբանվել է Պարսկաստանը այն «զնահատելի ծառայութիւնների մասին, որ նա մատուցանում է Թիւրքիային և Գերմանիային, որոնք կոչված են իշխելու աշխարհիս վրա»։ Ապա յոյս է յայտնվել, որ շատ շուտով ռուսները և անգլիացիները դուրս կը վանվեն Պարսկաստանից»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

— o —

ՅԱՆՑԱՆԸ ԵՒ ՊԱՏԻԺ

Ցոյս ունեմ, որ այս վերնագիրը կարդացողները գրուածքս չեն ընդունի որպէս գոկտօրութեան դիսերտացիա կամ հումէական իրաւագիտութեան մի յաւելուած։

Եւ եթէ այդպէս ընդունեն, շատ կը սխալվեն, որովհետև սա մի հասարակ պատմութիւն է։

Սա մի պատմութիւն է այն մասին, թէ ինչպէս գեւղացի Մարկոսը, ներողութիւն, պատկառանք ունենանք, Մարկոս-աղան, Նորշէնի այն զօրաւոր եկեղեցու երէցփոխը, գողութեան համար պատժեց իր որդուն։

Ես ինքս, ի հարկէ, ականատես չեմ եղել այդ բոլորին, բայց այսքանը գիտեմ միայն, որ մի օր գեւղացի Մարկոսը և իր կին Զարմանը խիստ անհանգիստ էին։

Վաղ առաւօտից սկսած նրանք փոխ առ փոխ կանգնում էին իրանց սենեակի լուսամուտի մօտ և նայում դէպի իրանց մառանը, որի հին դրան վրա փայլում էր մի նոր կողպէք, ինչպէս կեղտոտ փողկապի վրա ադամանդեայ քորոցը։

Նրանք նայում էին այդպէս և ժամանակ առ ժամանակ խօսում իրար հետ։

Բանը նրանումն էր որ մի ամբողջ շաբաթ շարունակ նրանց մառանից գողութիւն էր կատարվում, և նրանք չը գիտէին, թէ ով է այդ անողը։ Ամեն օր, երբ Զարմանը մըտնում էր մառան, տեսնում էր, որ մի անյայտ և անզգոյշ ձեռք իր դրած բաները շարժել է տեղից, բացել է այս կամ թթուի կճուճի բերանը և խուզէ թողել գետնի վրա։ Սկզբում Զարմանը կարծեց, թէ այդ ամենը ինքն է անում, յետոյ մոռանում, կամ թէ չէ՝ մուկն է դիպչում. բայց մի օր էլ երբ նա աչքերը դէպի առաստաղը բարձրացրեց և սարսափով տեսաւ, որ խնձորի, տանձի և խաղողի կախանները «թեթևացել» են նոր իսկոյն գլխի ընկաւ, որ մառանը գող է մտնում. իսկ թէ ով է մտնում, նա տարակուսում էր։ Տարակուսում էր, որովհետև մառան մտնող գողը նախ պէտք է մտնէր տուն, որպէսզի բանալի ունենար։ Բայց յետոյ նա ենթադրեց, որ դուռը կարելի է բանալ և յարմարեցրած բանալիով։ Սակայն ով պէտք է լինէր այդ բաց անողը։

— Չը լինի թէ մեր հօտաղն է,—մտածեց Զարմանը և իր կասկածը դէպքի հետ միասին յայտնեց մարդուն։

Մարկոսը, որ ունևոր լինելու և սակէ ժամացոյց ունենալու պատճառով եկեղեցու երէցփոխ էր ընտրված և խելօք մարդ էր համարվում գեւղացիների մէջ, խնդաց կնոջ խօսքերի վրա և ասաց, որ դժուար թէ Ադամը (Ծառան) այդպիսի բան անի։

— Բայց ով գիտի,—աւելացրեց նա,—Աւետարանն ասում է՝ մարդն անքննելի է. շատ կարելի է՝ անում է. բայց պէտք է հաստատ իմանալ, հարց ասել։

Կինը համաձայնեց նրա հետ։

Եւ նրանք ամբողջ երկուսով լուսամուտի մօտ կանգնած՝ անհանգիստ աչքերով նայում էին դէպի մառանը, տեսնելու թէ իսկապէս ով է մտնելու այնտեղ։

Եւ որովհետև նրանք կասկածում էին իրանց ծառային, այդ պատճառով առանձնապէս հետևում էին նրա իւրաքանչիւր քայլին։ Ադամը, որի միրուքը սկսում էր աչքերի տակից և որը մօտ 30 տարեկան մի կաղ տղայ էր, այդ օրը, հակառակի պէս, շարունակ գնում-գալիս էր մառանի առջևից՝ դարմանի քթոցը շալակին կամ խոտի խուրձը գրկին։ Երբ նա հաւասարվում էր մառանի դրան, մարդ ու կին անհամբեր սպասում էին, որ անմ-անմ հօտաղը քթոցը կամ խուրձը կը դցի գետին, դրպանից կը հանի՝ ով գիտէ որ աղբակոյտում գտած մի ժանգոտ բանալի, և մառանի դուռը բանալով կը մտնի ներս։ Բայց օրն եկաւ ճաշ դառաւ և ոչինչ չը պատահեց։

Ադամը, սպասածի հակառակ, փոխանակ մառան մտնելու, գնաց նստեց գոմի պատի տակ, արևի դիմաց, և սկսեց ապակու կտորով մաքրել իր տրեխի կաշին։

Մարդ ու կին, այս տեսնելով, մտածեցին, որ գողը ցերեկով գողութիւն չի անի. նա անպատճառ գիշերն է մտնում, պէտք է գիշերը հսկել։

Հէնց այս մտքի վրա էին նրանք, երբ շշվացնելով ներս մտաւ նրանց որդի Արտուշը, մօտ 15 տարեկան մի պատանի, որ ծխական դպրոցն աւարտելուց յետոյ՝ պարապ շրջում էր գիւղում և երբեմն տէրտէրի տղայի հետ գնում էր գետը ձուկ որսալու կամ անտառը թռչուն սպանելու։ Ներս մտնելով, նա անցաւ սենեակից սենեակ և նորից շշվացնելով դուրս եկաւ։

Մարկոսը, որ ամենայն աչալրջութեամբ հսկում էր որդուն, որ վատ շրջան չը մտնի և միշտ տէրտէրի տղայի հետ ընկերութիւն անի, այս անգամ էլ որդու դուրս գնալուց յետոյ՝ նայեց նրա ետևից, տեսնելու թէ որ կողմն է գնում նա։ Եւ հաղիւ մօտեցել էր լուսամուտին, նա իսկոյն ձեռքով արաւ կընոջը։ Զարմանն շտապով մօտ գնաց։

Եւ ահա թէ ինչ տեսան նրանք երկուսով։

Արտուշը կանգնել էր մառանի դրանը և խլուշ-խլուշ անելով նայում էր շուրջը։ Եւ շուրջը դիտելով, ինչ-որ մի բան էր խաղցնում բուռն մէջ ու շրթունքները շարժում, որ, ինչպէս երևում էր, շշվացնում էր դարձեալ։ Այսպէս մի քանի անգամ նայեալ դիտեց իր չորս կողմը և փոքր յետոյ կռկին ու կրկին շուրջը նայելով, մօտեցաւ մառանի դրան, շտապով բացեց այն և մտաւ ներսը։

— Գողը գտնվեց, բացագանչեց Մարկոսը։

Իսկ Զարմանն, այդ տեսնելով, ուզեցաւ վազել մառան և որդուն տեղն ու տեղը բռնելով պատժել, բայց մարդը պահեց նրան։

— Կաց,—ասաց,—թող երեխան սիրտը հովացնի։

Ու կնոջ թեւից բռնելով, նորից տարաւ նրան լուսամուտի մօտ։

Զանցաւ մի քանի րոպէ, մէկ էլ Արտուշը՝ պատի պէս կարմրած դէմքով՝ դուրս եկաւ մառանից, դուռը կողպեց շտապ-շտապ և, ձեռքերն ուռած գրպանները կախելով, վազեց դէպի խոտանոցը։

— Հիմի ես ինչ անեմ էդ փէին,—ճչաց Զարմանը զայրացած. մառանները չը դնեն ուրգի ռակ ու կտրատեմ...

— Սուս, սաստեց նրան Մարկոսը,—ինչ էլ հարկաւոր չի. թող։

— Ոնց թէ՝ թող,—բարկացաւ Զարմանը,—իմ աչքի առաջ գողութիւն են անում, թող-ռեմ. էդ ինչ խելք է։

— Բեզ ասում եմ թող՝ թող,—ասաց Մարկոսը ձեռքը շարժելով։

Եւ Զարմանը, որ այն կարծիքն ունէր թէ մարդը՝ ինչ էլ լինի՝ տան անդամ խելօք է կնոջից, որովհետև միրուք ունի, մնաց նաւորապէս իր ամուսինը, որին «սաղ գլուխ երեցփոխ է ընտրել» և որը իրիկուն-առաւօտ, որ նա, այդ առևտրա-արդիւնաբերական ոյժը, ներդաշնակվի հայութեան ազգային մարմնի հետ, ունենայ այն ոգին և ուղղութիւնը, ինչ որ ունէին հայ վաճառականութեան նախահայրերը՝ Խոջա Սաֆարները, Լազարեանները, Էմինները, Ռաֆայէլ Մուրադները, Խալիբները և այլք։

Բայց մեր գլխաւոր ցաւն էլնց այն է, որ հայ առևտրա-արդիւնաբերական դասը շատ քիչ է հետաքրքրվում այժմ իր ազգային և հասարակական հարցերով, չէ ցաւում, չէ տանջվում ժողովրդի ցաւերով, վշտերով և կարիքներով։

Ուրեմն մեր գլխաւոր պարտքը պէտք է լինի օգտվել այդպիսի մի պատեհաւոր ոյժից, որպիսին հայ առևտրա-արդիւնաբերական դասակարգն է և ուղղել նրա գործունէութիւնը դէպի ժողովրդական-հասարակական և ազգային ծառայութեան ուղին։

Հ. Առաքելեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ՕՐԵՐԸ

Մեր օրերն այնպէս նման են աշնան,
Մեր կեանքն էլ թափվող տերևների կոյտ.
Ադնիւ տենչանքներ վարդի հետ թոշնան,
Բաղձանք չը թողից բաղդը կոյր, անգութ...

Միտքը ստեղծող չի ցանում, քաղում.
Պայքարի ոգին իջաւ գերեզման.
Լոյսի գէթ նշոյլ... անձրև է մաղում -
Մեր օրերն այնպէս աշնան են նման...

Իսկ գեղեցկութեան տաճարի շեմքին
Մենք մոխիր ցանված չոքել ենք հլու.
Երկչում ենք նայել գալիքի դէմքին—
Լոկ արցունք ունենք աշնան հետ լալու...

Ու մեր օրերն էլ թխպապատ, ամպոտ,
Մեր դատն է գերի տիրող ժխորին.
Մեր երգն ու հէքիաթ դարձել են սև բոթ,
Ո՞ւր է գեղեցկի խորհուրդը խորին...

Շուշանիկ Կուրղինեան

* * *

Լացող ատաղձի դժկամ հայեացքից
Ցուզվում է հոգիս՝ անհուն վշտի ծով.
Դալկադէմ լուսնի ցաւը և կսկիծ
Համակում են ինձ անյայտ թախիծով։

Անտուն զեփիւռի ողբագին նուագ
Հուր է արծարծում սրտիս մոխրի տակ.
Խելայեղ առուի ցաւոտ մեղեդին
Մահերգ է կարդում իմ անյոյս սրտին...

Եւ ողջ բնութիւն՝ մարմնացած մի ցաւ,
Լոկ հառաչանքի կերտել է անձաւ...
Այդ մութ քարայրում փակած, տարագիր՝
Քանի՞ սանջես ինձ, օ՛ձ հակառագիր...

Ց. Պետրոսեան

ԳԱՅՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

— o —

◆ «Բ. Բ.»-ն հաղորդում է. «Անգլիացիների անաջողութիւնը Միջագետքում բացատրվում է նրանով, որ հոկտեմբերին Թիւրքական մի ուժեղ զօրաբանակ Ֆօն-դէր Գոլց-փաշայի հրամանատարութեամբ Պօլսից մեկնեց Բաղդադ։ Թիւրքերի հանկարծական բոլորովին նրանք հասան օգնութեան մեծ չափով։ Անգլիացի զօրքերը գնեցին Տաունսհնդի հրամանով նահանջելու»։

◆ «Դէյլի-Նիւսի» տեղեկութիւնների համաձայն, Աւստրօ-Ունգարիայի մի քանի քաղաքներում այս օրերս տեղի են ունեցել հակագերմանական անկարգութիւններ, որոնց զսպել են զօրքերը և ոստիկանութիւնը։

◆ Մերուանի Ֆրանց-Յովսէփ կայարանը լանգամ չէ կամենում այն մասին, թէ աւստրիացի զօրքերը նոյնպէս պէտք է միանան Եգիպտոսի դէմ նշանակված թիւրք-գերմանական արշաւազօրին։ Կայարանը գրում է, որ Սերբիայի դէմ աւստրիացիքն աւելի տաքացին, քան գերմանացիքը։ Եւ այժմ նա պահանջում է գերմանացիներից շտապով օգնութիւն ուղարկել իտալական զօրաճակատի համար։

◆ «Բ. Շ.»-ն հաղորդում է, որ գերմանացիքը սկսել են ծանր թնդանօթները սերբական ռազմաճակատից փոխադրել դէպի արևմտեան զօրաճակատը։

◆ «Հ. Բ.»-ն գտնում է, որ Բալկանում թշնամին չհամարձակվեցավ վերջացրեց իր գործը։ Ազատվող զօրքերին նա կարող է ուղարկել Եգիպտոսի դէմ. բացի այդ՝ լրագրի կարծիքով՝ թշնամին կարող է վերսկսել իր յարձակումները մեր արևմտեան զօրաճակատի վրա կամ թէ ուժեղացնելով ռազմի գործողութիւնները իտալացիների դէմ։

◆ Ճամառ կռիւներ են Իսէկի շրջանում։ Աւստրիացիքը մի փոքր առաջացել են։

◆ «Դէյլի Նիւսը» յայտնում է նոյեմբ. 24-ից, որ Սուէզի շրջանում գերմանացիք օգնութիւն են ստացել 2 զօրաբանակ։

◆ Բուլգարէստում ստացված տեղեկութիւնների համաձայն, սերբական թագաւորը եկել է Ալէքսիս և ինչանել է Սկիտարիի մօտի մի գիւղում՝ գոհաժառանգի Պաշիչի հետ։

◆ Պետրակովում կայանալու է Լեհաստանի 60 քաղաքների համագումարը՝ նորմալ կեանքը վերսկսելու հարցի առիթով։

◆ Գերմանացի վաճառականների և արդիւնաբերողների միջնորդութեան համաձայն, Վարշավայում գերազոյն գերմանական դատարանը վերացրել է մաւրնակայի մօրատորիումը։

◆ Պետրօգրադ է եկել անգլօ-ֆրանսիական զինուորական մի պատգամաւորութիւն գնդապետ Մանժէնի գլխաւորութեամբ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՅՈՒՐԸ

Նորերս Գերմանիայում հրատարակվել մի գիրք, որ ցոյց է տալիս գերմանական ամբարտաւանութեան ոգին կամ magni grandiosa-ն։ Այդ գիրքը կոչվում է «Մեր Գերմանիա և Միջին Եւրոպան 1950 թ.»։ Ահա մի քանի քաղուածքներ այդ գրքից։

«Կարճ ժամանակում,—գրում է հեղինակը,—մենք հանդիսատես կը լինենք այսպիսի երևոյթի. գերմանական դրօշակը կը ծածանվի 86.000,000 գերմանացիների գլխի վրա, որոնք կիշխեն 130.000,000 հեւրօպացիների բնակված երկրի վրա։ Բայց միայն գերմանացիները պէտք է վայելեն այդ երկրագունդի քաղաքացիութեան բոլոր իրաւունքները, միայն գերմանացիները պէտք է իրաւունք

ունենան հողատէր լինելու։ Մեր ցեղը կը գրաւէ այն դիրքը, որ գրաւում էր միջին դարերում։ Մենք կը լինենք կառավարիչ ազգ, որ թոյլ է տալիս հպատակ ազգերին զբաղվել միայն կոպիտ աշխատութեամբ՝ ճորտերի նման»։

Գրքի շապիկը ներկայացնում է հիւանդ քաղաքական ֆանտազիայի ծայրակէտը։ Նա ներկայացնում է Եւրոպայի քարտէզը 1950 թ.։ Ռուսաստանը յետ է մղված դէպի իր նախկին Մոսկվեան սահմանները։ Բէլգիան, Ֆրանսիան, Հոլանդիան, Դանիան այլևս գոյութիւն չունեն։ Անգլիան դարձել է Գերմանիայի վասալը։ Դրանց տեղ, շնորհիւ տատօնի, Եւրոպայում երևացել են երկու նոր անկախ թագաւորութիւններ՝ Շօտլանդիա և Իրլանդիա։ Մի խօսքով՝ ամբողջ Միջին Եւրոպան վերածվել է միակ «Մեծ Գերմանիայի»։

Գերմանիան պէտք է դառնայ փոքր ազգութիւնների պաշտպան։ Նրա թոյլատրութեամբ մի շարք նոր պետութիւններ երևան կը գան՝ Լեհաստան, Ռուսինիա, Գալիցիա, Բուկովինա, իրրև վասալներ Գերմանիայի։ Աւստրօ-Ունգարիան յօժարակամ կը ձուլվի Մեծն Գերմանիայի հետ։

ՄԻ ՀԱՅ ԾՈՎԱՅԻՆ ՍՊԱՆԻ ԵԶԱՏՈՒՄԸ ԹԻՒՐՔ ԲՌՆԱԳԱԼՈՒԹԵԱՆ ՃԱՆԿԵՐԻՑ

Բուլինական Պաղարջիկ քաղաքից գրում են մեզ հետեւեալը հոկտ. 9 թւից.

«Ֆրանսական ծովային սպայակոյտի ճիւղին նախկին կցորդ, ծովային հրամանատար տիար Զատիկ Խանդամեան, որ երկու տարի առաջ հայկական ըլֆօրմներու, ֆրանսական ժանդարմ-սպաներու հետ Թիւրքիա գացած և օսմանեան կառավարութեան հրաւէրով՝ օսմանեան ծովային զօրութեան մէջ ծովեզրաց պաշտպանութեան հրամանատարութեան պաշտօն ստանձնած էր, թիւրք և ֆրանսական պատերազմը սկսելուն՝ Կ. Պոլսոյ մէջ բանտարկուած և օտար դեսպանատնից միջամտութեամբ ազատուած և այս անգամ օսմ. ծովային մասակարարութեան ընդհանուր քննիչ անուանուած էր և Կ. Պոլսէն դուրս չելլելու համար հսկողութեան տակ առնուած էր։

«Հայկական ըֆօրմներու քարտէզը հրատարակած ըլլալուն համար՝ յիշեալ սպան քանի մը անգամ պատերազմական ատեանը տարուած և օտար դեսպանատնից զինուորական և ծովային կցորդներու շնորհիւ աքսորուածներու տխուր բաղդին չէր վիճակուած, բայց 2 ամիս առաջ իր պաշտօնէն բոլորովին հրաժարցուած ըլլալով (գերման դրդումով)՝ հսկողութեան տակ առնուած էր։ Անպայման կորուստէն զինքը փրկելու համար, շատ ազդու միջամտութեամբ բուլգարական կառավարութիւնը, իր Կ. Պոլսոյ զինուորական կցորդին շնորհիւ, բերած է հրամանատար Խանդամեանը Կ. Պոլսէն Բուլգարիա և անուանած է զինքը բուլգար ծովային և ծովեզրաց ընդհանուր հրամանատարութեան քով խորհրդական. որքան որ յոգնած և տրկարացած է, բայց ողջ-առողջ վիճակի մը մէջ կը գտնուի և կը խնամուի բուլգար կառավարութենէն»։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Ինչպէս յայտնի է, գերմանացիները Վարշավայում բացել են լեհական համալսարան։

Այդ բացման նկարագրութիւնը տրված է գերմանական «Voss. Zeit.»-ի մէջ։

Լրագրի ասելով, լեհացի իշխան Լիւբոմիրսկին, որ ներկայ էր համալսարանի բացման հանդէսին, ասել է.

«Այսօրվայ օրը մեզ բերեց արևի երկու ճառագայթ—մէկը երկնքից, միւսը՝ երկրից»։

Հանդէսը սկսվեց մաղթանքով։ Իսկ նախքան այդ՝ արքայական հին պալատի և հին քաղաքի փողոցները լցվել է հոծ բազմութեամբ։ Ցաճարի շուրջը զօրքերի պէս կարգով կանգնել էին գիմնազիստները լեհական գլխարկներով։ Կարգը պահպանում էր քաղաքային միլիցիան. միլիցիաներները իրանց թևերի վրա կրում էին նշանակապեր լեհական և գերմանական գոյներով։

Ցաճարում մաղթանքին ներկայ էին նոր համալսարանի պրոֆեսորները և լեհական երևելիները։

Կրակովի արքեպիսկոպոսը բացագանչեց. «Pax vobiscum». Քարոզիչ Շլագովսկին լեհերէն լեզուով արտասանեց մի քարոզ, որի մէջ, ի միջի այլոց, ասաց, որ այժմ կազմվում են լեհ ժողովրդի լեգիոններ, բայց լեգիոններ ոչ թէ սրով կռուող, այլ լեգիոններ երիտասարդների, որոնք վճռում են առողջ գիտութիւն։

Այնուհետև հանդէս կայացաւ և համալսարանում։ Համալսարանի շէնքը շուտով լցվեց ամենաընտիր հասարակութեամբ։

Ակադեմիական ակտի հէնց սկզբին դասլեհ մասն համալսարանի հոգաբարձու կոմս Գուտտէն-Զանսկի և Կրակովի արքեպիսկոպոսը։ Ընդհանուր նահանգապետ ֆօն-Բեզելերը համալսարան եկաւ քառաձի կառքով, կիրասիրների ուղեկցութեամբ։

Նրանից յետոյ, երբ նահանգապետը ողջունեց արքեպիսկոպոսին և համալսարանի վարչութեան, նոր համալսարանի ռեկտոր Բրուձինսկին ճառ ասաց համալսարանի նշանակութեան մասին։

Թղթակցի ասելով, ռեկտորի ճառը շուտ-շուտ ընդհատվում էր ծափահարութիւններով, մանաւանդ այն ժամանակ, երբ նա ասաց, որ Լեհաստանը միշտ պատկանել է Արևմտեան-Եւրոպայի կուլտուրական շրջանակին։ Վարշավայի համալսարանի հաստատումը վկայում է, որ արևմտեան-եւրոպական Լեհաստանի ոգու և Արևելեան Եւրոպայի ոգու միջև ընդհանուր ոչինչ չը կայ։ Այնուհետև ռեկտորը գերմանական լեզուով շնորհակալութիւն յայտնեց ընդհանուր-նահանգապետին։ Ընդհանուր-նահանգապետ Բեզելերը արտասանեց կարճ պատասխան ճառ, որի մէջ նա, ի միջի այլոց, ասաց, որ Վիլհելմ կայսրը, որի անունից ինքը բանում է համալսարանը, համաձայնութիւն է տուել բանալու այն հաստատութեամբ, որ նոր համալսարանը կը լինի գիտութեան օջախ, և, օրվայ չարիքները մի կողմը թողած, պէտք է ծառայի գիտական գործունէութեան բարձր նպատակներին։

Ընդհ. նահանգապետի ճառից յետոյ, լեհական խօրը երգեց «Gaudeamus»-ը, որին ձայնակցեցին ներկայ եղողները առանց ազգային խտրութեան։

Առ այժմ դասախօսութիւններին յաճախելու վկայական են ստացել 500 ուսանող։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք 1) Էջմիածնից, Գլխ. Կարապետիչ Ցանձնաժողովից, Պարիզից Պողոս փաշա Նուպարի կողմից Վեհ. Կաթողիկոսին ուղարկված և Նպաստամատոյց Ընկերութեան յանձնելի գումարը՝ 10,000 ռուբլի, 2) Թիֆլիսում, Ալ. Խատիսեանից, յօգուտ Վանի վերաշինութեան գործի, Մանթաշեանի տուած գումարից—1000 ռ., 3) Մերվի ընակիչ Նիկողայոս Սահակեանց՝ իր նորոդ հանգուցեալ կնոջ Մանուշակ Սահակեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն 15 ռ., 4) Հաղբատ գիւղից, Մարտիրոս Թանդիլեանից 5 ռ., 5) Բօստօվից, Նիկ. Աւագեանից, հանգ. Յովհ. Ռուստամեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն 10 ռ., 6) Թիֆլիսում, տ. Ովսաննա Թումասից 10 ռ., 7) Թիֆլիսում, Յովհաննէս Ց. Անոյեանից 3 ռ., 8) Ղզլարից, Զաք. Ս. Նարիմանեանից 10 ռ., 9) Մէշէդից, Սէլիմ Շահինեանից և օր. Տիգրանուհի Նահապետեանից 19 ռ. 20 կ., 10) Ամերիկայից, Սուրէն Սուրէնեանից՝ փախստական Դաւիթ Սուրէնեանին յանձնելու 150 ռ., 11) Գօրիսից, Հայրապետ Մելքումեանից, ի յիշատակ հանգ. Մարիամ Մելքումեանցի 25 ռ., 12) Հաղբատից, Մ. Ա. Խուբլարեանի միջոցով, Մովսէս, Իսրայէլ և Լեոն Խուբլարեաններից, ի յիշատակ Աւագատէ Խուբլարեանցի 25 ռ., 13) Կեչէից, Խանում Տէր-Մեսրոպեանից 15 ռ., 14) Զարջուլից, Գրիգոր քահ. Տէր-Գրիգորեանի միջոցով, հանգանակված՝ Նոր-Բուխարայում Մարգարէ Բարայեանի թաղման ժամանակ 46 ռ.։ Գումարն է 11 333 ռ. 20 կ.։ Նախորդ ստացած 70,189 ռ. 86 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 250) ստացել ենք ընդամենը 81,523 ռ. 06 կ.։

ՎԱՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

(Հեռագրով)

Վան, 24 Նոյեմբերի

Այսօր Զուլֆա-Դիվման-Կոտուրի ճանապարհով այստեղ հասան Աղաբէգ Համբարեան իր երկու ընկերներով և Գ. Տէր-Գրիգորեան, որոնք ուղարկված են Թիֆլիսում նոր կազմված «Վերաշինութեան» յանձնաժողովի կողմից՝ աշակցելու հայկական միլիցիայի գործերին և օգնելու տեղական ժողովրդին։

Շուտով այստեղ կը ժամանեն և գեներալ-մայոր Թամամշեանն ու Լ. Եւանգուլեանը՝ փախստականների կարիքները և դրութիւնը ուսումնասիրելու համար։

ՎԱՆ ՈՒՂԵՒՈՐՎՈՂ ՑԱՆՁՆԱԺՈՒՄԸ

Առաջիկայ կիրակի Զուլֆայի վրայով Վան է ուղևորվում Կովկասեան Քաղաքների Միութեան լիազօր Ս. Աթանասեան, տանելով իր հետ Քաղաքների Միութեան՝ Վանի համար յատկացրած բժշկա-սանիտարական և որբանոցային յանձնախումբը՝ բաղկացած 28 հոգուց։ Ցանձնախմբի մէջ մտնում են՝ բժիշկներ, քոյրեր, ֆելդշերներ, որբախնամ քոյրեր և մի շարք վանեցի արհեստաւորներ։ Ցանձնախումբը տանում է իր հետ Վանում հիմնելիք 200 մահճակալով հիւանդանոցի և որբանոցի 120 որբերի համար անհրաժեշտ դեղօրայք և բոլոր կահաւորումն ու իրեր, նաև պարենաւորման մթերքներ։ Բացի դա՝ Ս. Աթանասեան տանում է իր հետ Քաղաքների Միութեան կողմից պատրաստված՝ փախստականների գլխաւոր լիազօր գեն. Թամամշեանի յանձնարարութեամբ՝ Վանի և շրջակայքի ազգաբնակութեանը բաժանելու ահագին թւով վերմակներ և մօտ 40,000 կտոր տաք շորեր, որոնց մի մասը նուէր է Ամերիկայից և Մոսկվայից։

Այդ բոլորը կազմում է մի գնացք. դրանց տեղափոխութեան համար յատկապէս գնված են 10 ֆուրգոններ իրանց ձիերով՝ մշտական յարաբերութիւն ստեղծելու Խոյի և Վանի միջև, ուր և մի քանի կէտերում հիմնվում են յատուկ մանգական կայաններ։

Ս. Աթանասեան Վանում և նրա շրջանում մնալու է որպէս Քաղաքների Միութեան լիազօր, գլուխ բերելու և ղեկավարելու այդ բոլոր հաստատութիւնները։

ՄԻ ՈՂՋՈՒՆԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ

Սեպտ. 15-ին Շամախու թեմի առաջնորդի հրաւէրով Բաքւում խորհրդակցական ժողով է կայացել, ուր որոշվել է մի քանի հարիւր հազար ռ. ժողովել և ցորեն ու ալիւր գնելով՝ բաժանել կարօտեալ հայ գիւղերին։

Ժողովը հանգանակութեան աշխատանքը յանձնել է գաղթականական կոմիտէի ընտրած մասնաժողովին, ընտրելով միևնոյն ժամանակ մի այլ մասնաժողով, որի ձեռքում կենտրոնանալու են ժողովված գումարները և որը պէտք է կատարի գնման ու վաճառման գործողութիւնը։

Համաձայն ժողովի արձանագրութեան, գումարները ստացվում են փոխարինաբար, մի տարի յետոյ փոխառուներին վերադարձնելու պայմանով առանց տոկոսի։

Ինչպէս տեսնում էք, սա մի շատ համակրելի ձեռնարկ է, որը գալիս է իր միջոցները ներածի չափով դիւրութիւն տալու կարօտեալ հայ գիւղերի պարենաւորումի գործին, ազատելով նրանց անխիղճ սպեկուլիանտների կեղեքումներից։

Ռուսաստանը հացի ահագին պաշար ունենալով հանդերձ, պետութեան մի քանի վայրերում ժողովուրդը սովի սպառնալիքի տակ է գտնվում։ Այդպիսի դժբաղդ վայրերից մէկն է Կովկասը, ուր տեղական ազգաբնակութեան վրա աւելացել է նաև մեծ թիւ փախստականների։

Գիտենք, որ իշխանութիւնը, որպէս և քաղաքային վարչութիւնները զբաղված են ժողովրդին կենսամթերքներով ապահովելու ծանրակշիռ հարցով։ Այնու ամենայնիւ բոլոր փորձերը ամենքին էլ բերել են այն վերջնական եզրակացութեան, որ առանց ժողովրդի կօլեկտիվ մասնակցութեան ընդհանուր չարիքների առաջն առնել կարելի չէ։

Անհերքելի է, որ համաշխարհային պատերազմը մեծ դեր է խաղում որոշ առարկաների թանգութեան մէջ. բայց աւելի մեծ դեր խաղում են բոլորովին այլ կաթեգորիայի անհատներ։ Սրանք են, որ ստեղծում են արհեստական թանգութիւն, որ արդեօք են դառնում մթերքների կանոնաւոր մատակարարութեան գործին։ Եւ այս բոլորը անում են միայն ու միայն յօգուտ իրանց գրպանների։ Շնորհիւ սրանց մենք աջ ու ձախ, օրը ցերեկով կողոպտվում ենք. շնորհիւ սրանց Թիֆլիսում, Բաքւում, Երևանում և Կովկասի այլևայլ վայրերում հաց չը կայ, այն ինչ նոյն Կովկասի զանազան կայարաններում հարիւրաւոր վագոններով ցորեն ու ալիւր է կիտված ու փտում։

Զը նայելով որ այդ կաթեգորիայի անհատները շատ փոքր թիւ են կազմում, այնու ամենայնիւ նրանք այնքան ուժեղ են, ձեռնտաս և դրութեան տէրը, որ ոչ մի ընդդիմութիւնը նրանց վրա չի ազդում։ Իշխանութիւնը պատիժներ, տուգանքներ է սահմանում, նրանք շարունակում են իրանց կեղեքումը։

Շատերի այն հարցին, թէ ինչի մէջ է կայանում դրանց ոյժը, կարելի է պատասխանել, որ գլխաւորապէս այն բանի մէջ, որ նրանց դէմ կազմակերպված մաքառում չը կայ, իսկ այդպիսի կազմակերպված ոյժ գոյութիւն չունի նրա համար, որ հասարակութեան մէջ չը կայ իրաւունքների ու պարտաճանաչութեան զգացմունքի խոր գիտակցութիւն։

Մենք մեր աչքով տեսնում ենք զանցառութիւններ, գողութիւն, խարդախութիւն, կաշառակերութիւն և այլ բազմապիսի չարիքներ, բայց անցնում ենք նրանց քով, ձևացնելով թէ ոչ տեսել ենք, ոչ լսել։

Բայց անհերքելի ճշմարտութիւն է, որ իրաւագիտական կոչման բարձրութեան կանգնած ոչ մի հասարակութիւն այդ չէր վարվի։

Իշխանութիւնը չէ միայն, որի վրա պատասխանատուութիւն կայ չարագործներին պատժելու և չարիքները արմատախիլ անելու։ Նոյն պարտականութիւնը և նոյն չափ ծանրանում է պետութիւնը կազմող քաղաքացիներից իւրաքանչիւր մի անդամի վրա։

Որքան էլ ուժեղ լինի իշխանութիւնը աչալուրջ, որքան էլ անողոք լինի օրէնքը չարիքներն ու չարագործութիւնները դատելու նկատմամբ, այդ նրանց լիովին չի աջողվի, եթէ ինքը՝ ժողովուրդը չակցի, մանաւանդ եթէ նոյն ժողովուրդը կոյր ու խուլ ձևանալով՝ հէնց ինքը առատ նոյն չարիքների անարգել զարգացումն։

Ենթադրենք, որ դուք պետական կամ քաղաքացիական այս կամ այն հաստատութեան հետ գործ ունէք, կամ աւելի պարզ խօսենք, ենթադրենք, որ դուք ապրանք էք երկաթուղով ուղարկելու, և նրա պատճառներից մէկը իր պարտականութիւնը կատարելու համար ձեզնից կաշառք է պահանջում։ Ենթադրենք, որ դուք պահանջվածը կաշառքը տալիս էք, ինչպէս տալիս են զարաւորները, փոխանակ բողոքելու՝ որ կանէր իր կոչման բարձրութեան կանգնած մի քաղաքացի. ինչ կարող անել այս դէպքում իշխանութիւնը։ Երբ ինքներդ էք կաշառք առաջարկում, պէտք անում են շատերը, կամ որևէ մի յանցագործութիւնը բացված դէպքում, փոխանակ ձեր վկայութեամբ հաստատելու ընդհակառակը՝ վկայում էք ի նպաստ յանցաւորի, չէ որ հէնց այսպիսով դուք ինքներդ էք չեզոքացնում իշխանութեան ոյժը։

Օրինակներ կարելի է բերել ոչ միայն հասարակ մահկանացուներից, այլ և պետական գիտակից անհատներից, որոնք քաղաքային վարչութիւնների անդամ լինելով պատիւն ունեն։

Ուրեմն, ծածկել այն չարիքը, որի դէմ ուղում է կռուել իշխանութիւնը և որի վրա շեշտում է Նորին Բարձ. Կովկասի Փոխարքան, դա պատիւ չէ բերում ոչ մի քաղաքացու։

Ճիշդ է, շատ է պատահել, որ նման յանցագործութիւնների դէմ բողոքողը հէնց ինքն է տուժել, որովհետև բողոքողից պահանջվել են այնպիսի անհերքելի ապացոյցներ, որպիսիք ներկայացնելը շատ անգամ բոլորովին անհնարին է եղել, սակայն դա պատճառ չէ, որ հասարակութիւնը զինվելով՝ անձնատուր լինի անխիղճ կեղեքողների բացարձակ քմահաճոյքին։

Հակառակ այս ամենի, իշխանութեան քում հարցը տարբեր արժէք կը ստանար երբ բողոքողի, մաքառողի դերում հանդէս գայ մի կազմակերպված մարմին։

Բայց ասած է՝ «մինչև առուն չոր գայ, դորտի աչքը դուրս կը գայ»։ Բայց որ իշխանութիւնը և քաղաքային վարչութիւնները մտածեն կեանքի առուն չորացնելու և նրա հոսանքը կանոնաւորելու մասին։ Ի հարկէ լաւ է ուշ, քան երբէք։ Սակայն ժողովուրդը հաց է ուզում. քաղցած ստամոքսը սպասել չը գիտէ։ Այս տխուր հրաժեշտութիւնը աչքի առաջ առնելով սեպտեմբերի 15-ին կազմված ընկերութիւնը արդէն սկսել է իր գործունէութիւնը։ Որովհետև գործի գլուխ են անցել գիտակից ձեռնտաս և վստահելի անձնաւորութիւններ, նախօրօք կարելի է նրա աջողութեան համար բարի գուշակել։

ուօտ Աւետարան է կարդում, լուց, մտածելով թէ Մարկոսը երևի մի բան գիտէ, որ սատում է իրան։

Եւ նա չէր սխալվում։

Մարկոսն իսկապէս մի բան գիտէր, որ Զարմանը յետոյ պիտի իմանար։

* * *

Հետեւեալ օրը առաւօտեան Մարկոսը որդուն կանչեց իր մօտ և ամենայն զգուշութեամբ յայտնեց նրան, որ իրանց մառանից զողութիւն է կատարվում։

— Ես կարծում եմ,—ասաց նա,—որ էդ զողը մեր հօտարն է։

Ու, այս ասելով, Մարկոսը հարցրեց որդու կարծիքը, թէ իսկապէս հօտարը կանի այդ բանը։ Նա ինչ է կարծում։

Արտուշը, որ մինչև այս գլուխը կախ լսում էր հօրը, նրա վերջին խօսքերի վրա նայեց նրա երեսին։

— Ինչու չի անի, ասաց Արտուշը.—նա ամեն օր էլ զողութիւն է անում. տաւարը գնալու ժամանակ հանդից միշտ կարտօլ (գետնախնձոր) է զողանում ու խորովում։ Կարտօլ զողանողը՝ մառանից էլ զողութիւն կանի...

— Շատ կարելի է, ասաց Մարկոսը,—ես էլ կարծում եմ, որ նա է զողանում. բայց բանն էս է, թէ նա ինչով է բաց անում փակած դուռը. ձեռքին բանալի չունի, բան չունի...

Արտուշը խնդաց։

— Դա դժար բան է,—ասաց նա,—կամ բանալի գտած կը լինի կամ թէ չէ՝ մխով բաց կանի... ինչ կայ որ...

—Շատ կարելի է,—հաւանութիւն տուեց Մարկոսը։ Բայց հիմի ինց անենք, որ բռնենք դրան։

Արտուշը ոչինչ չը պատասխանեց.

— Դու կարող ես բռնել նրան,—շարունակեց Մարկոսը։

— Ինչու չեմ կարող, — պատասխանեց Արտուշը հպարտ.—կը բռնեմ ու հէրն էլ կանիծեմ։

Մարկոսը լռեց մի փոքր։

— Դէ լաւ,—ասաց նա տեղից ելնելով,—որ կարող ես, արի ինձ հետ։

Եւ նա որդուն տարաւ մառանը։

— Տեսնում ես,—ասաւ Մարկոսը որդուն ցոյց տալով տանձի, խնձորի, խաղողի ու սերկևիլի կախանները,—տեսնում ես սրանք ինչքան են հիմի, լաւ տես, որ եռոյ եթէ զողանան, հաշիւը միտդ ելի...

Արտուշը գլուխ բարձրացնելով մէկ-մէկ նայեց առաստաղից քաշ ընկած կախաններին և մտքում ինչ-որ հաշուեց։

— Հիմի արի էստեղ,—կանչեց հայրը նրան, և մի առ մի ցոյց տուեց թթուի, սերի և մեղրի կճուճները, նրանց խուփերը վերցնելով։

— Այս բոլորը,—վերջացրեց Մարկոսը,—ինչ որ կայ՝ քեզ եմ թողնում. հիմի տեսնենք, ինց պիտի պահես։ Եթէ զողին բռնեցիր, էն է հօ՝ կեցցես, եթէ չէ՝ ամօթ քեզ...

Ու այս ասելով, Մարկոսը խնամքով փակեց մառանի դուռը և բանալին յանձնեց որդուն, ինչպէս մի սրբազան աւանդ։

—

Եւ այդ օրվանից սկսած մառանից այլևս ոչինչ չէր զողացվում։

Ինչու չէր զողացվում։

Եթէ դուք լինէիք Արտուշի տեղը կը զգայիք։

Ստ. Զօրեան

Դերձիկեան, Թիւրքահպատակ, կ.-պոլսեցի. 19) Նիկողայոս Յովհաննիսեան Թոքմաչեան, Ալէքսանդրօպոլ քաղաքից. 20) Բարսեղ (նոյնը՝ Բարդուղիմէոս) Յակոբեան Քիամանաչեան, Ալէքսանդրօպոլ քաղաքից. 21) Գրիգոր Յարութիւնեան Աքմաչեան, Ախալցխա քաղաքից. 22) Ռուբէն Իսահակեան Յովհաննիսեան, Թիֆլիս քաղաքից. 23) Մարտիրոս Գալստեան Մարտիրոսեան, Ալէքսանդրօպոլի գաւառի Իլխաբ գիւղից. Մովսէս Աղաբէկեան Մելքումեան, Ջանգեզուրի գաւառի Հարար գիւղից. 25) Պօղոս Տէր-Գրիգորեան, Կարսի շրջանի Արմուտլի գիւղից. 26) Պետրոս Զաքարեան Գրիգորեան, Թիւրքահպատակ. 27) Սիմէօն Առաքելեան, Կարսի շրջանի Արմուտլի գիւղից. 28) Եղօ Առաքելեան, նոյն տեղից. 29) Մարգար Միրզայեան, նոյն տեղից. 30) Գալուստ Գէորգեան Սէիլեան, Կաղզուան աւանից. 31) Եփրեմ Աարիրեան Դաւթեան, Գանձակի գաւառից (պէտք է այդ գաւառի Բարսում գիւղից լինի). 32) Յովհաննէս Արզումանեան Մարգարեան, «Ղարաբաղցի»՝ ըստ Ս. Կուկունեանի մօտ գտնված ցուցակի. 33) Մեհրաբ Դատօյեան (որտեղացի լինելը չը կարողացանք ստուգել). 34) Ստեփան Յարութիւնեան («Մերոնի») Երևան քաղաքից. 35) Մուրատ Մխիթարեան Կալմուկեան (որտեղացի լինելը չը կարողացանք ստուգել)։

Ահա այն 35 հոգին, որոնք առաջ դատվեցին Երևանի շրջանային դատարանում, իսկ յետոյ Թիֆլիսի դատաստանական պալատում։ Այս վերջին հաստատութեան որոշումից պարզվում է, որ դատաստանական առաջին ինստանցիայում մեղադրեալներին պաշտպանել է իրաւաբան Գաբրիէլ Մնացականեանը։

Դատաստանական պալատի դատախազը պահանջում է հետեւեալ պատիժները հետեւեալ անձերի համար. Ս. Կուկունեանին—20 տարի, Պետրոս Գրիգորեանին—12 տարի, Սարգիս Թարանեանին, Մկրտիչ Մղդեսեանին, Մանուել Մխոյեանին և Եփրեմ Դաւթեանին—8 տարի իւրաքանչիւրին, Ստեփան Յարութիւնեանին, Վարդան Թիֆլիսեանին, Մարտիրոս Գրիգորի Հաջի-Դանիէլեանին, Մենաս Օգանեսեանին, Մանուկ Խաչատրեանին, Հաջի Կարապետ Բօյեաջեանին, Արզամ Պետրոսեանին, Խաչ Կարապետեանին, Աւետիս Մանուկեանին, Մուրատ Կարմուկեանին, Կոստանդին Լիսինեանին, Դաւիթ Զօլոխեանին, Ռուբէն Դերձիկեանին, Գրիգոր Աքմաչեանին, Ռուբէն Յովհաննիսեանին, Բարսեղ Քիամանաչեանին, Մարտիրոս Մարտիրոսեանին, Մովսէս Մելքումեանին, Յովհաննէս Մարգարեանին, Մեհրաբ Դատօյեանին—8 տարի իւրաքանչիւրին։ Մեղադրեալներից հոգի (Խաչատուր Հայկունի, Գրիգոր Տէր-Մեսրոպեան, Առաքել Դաւթեան, Նիկողայոս Թոքմաչեան, Պօղոս Տէր-Գրիգորեան, Գալուստ Սէիլեան, Սիմէօն Առաքելեան, Եղօ Առաքելեան և Մարգար Միրզայեան) արդարացվեցին։

Երևանի շրջանային դատարանի որոշումը դատախազի և մեղադրեալների բողոքով անցաւ Թիֆլիսի դատաստանական պալատը։ Դատախազը պահանջում էր պահանջում արդարացված 9 հոգու համար, իսկ մեղադրեալները պնդում էին այն բանի վրա, որ իրանք յանցաւոր չեն։ Դատաստանական պալատում Ս. Կուկունեանի պաշտպանը իրաւաբան Օսիպեանն էր։ Մնացած մեղադրեալներին պաշտպանում էր հռչակաւոր իրաւաբանական։

Երևանի շրջանային դատարանը տասնամեայ կիսը աշխատանքի պատիժ է տուել մեղադրեալներին. Ս. Կուկունեանին—20 տարի, Պետրոս Գրիգորեանին—12 տարի, Սարգիս Թարանեանին, Մկրտիչ Մղդեսեանին, Մանուել Մխոյեանին և Եփրեմ Դաւթեանին—8 տարի իւրաքանչիւրին, Ստեփան Յարութիւնեանին, Վարդան Թիֆլիսեանին, Մարտիրոս Գրիգորի Հաջի-Դանիէլեանին, Մենաս Օգանեսեանին, Մանուկ Խաչատրեանին, Հաջի Կարապետ Բօյեաջեանին, Արզամ Պետրոսեանին, Խաչ Կարապետեանին, Աւետիս Մանուկեանին, Մուրատ Կարմուկեանին, Կոստանդին Լիսինեանին, Դաւիթ Զօլոխեանին, Ռուբէն Դերձիկեանին, Գրիգոր Աքմաչեանին, Ռուբէն Յովհաննիսեանին, Բարսեղ Քիամանաչեանին, Մարտիրոս Մարտիրոսեանին, Մովսէս Մելքումեանին, Յովհաննէս Մարգարեանին, Մեհրաբ Դատօյեանին—8 տարի իւրաքանչիւրին։ Մեղադրեալներից հոգի (Խաչատուր Հայկունի, Գրիգոր Տէր-Մեսրոպեան, Առաքել Դաւթեան, Նիկողայոս Թոքմաչեան, Պօղոս Տէր-Գրիգորեան, Գալուստ Սէիլեան, Սիմէօն Առաքելեան, Եղօ Առաքելեան և Մարգար Միրզայեան) արդարացվեցին։

Երևանի շրջանային դատարանի որոշումը դատախազի և մեղադրեալների բողոքով անցաւ Թիֆլիսի դատաստանական պալատը։ Դատախազը պահանջում էր պահանջում արդարացված 9 հոգու համար, իսկ մեղադրեալները պնդում էին այն բանի վրա, որ իրանք յանցաւոր չեն։ Դատաստանական պալատում Ս. Կուկունեանի պաշտպանը իրաւաբան Օսիպեանն էր։ Մնացած մեղադրեալներին պաշտպանում էր հռչակաւոր իրաւաբանական։

մեկ ոչնչանալ։ Ամենամեծ փափաքն էր նրանց համար, որ Մարիամ Հայրիկ ինքն էլ գրի առնի իր հիշողությունները։ Ինչպես ասում է նրա մի հարազատ, Մարիամ Հայրիկ ամեն ինչ գիտեր, ամեն ինչ հիշում էր։ Ամեն ինչ գրի կարելի էր առնել նրանից։ Ամեն ինչ գրի առնելու համար նրան հարկավոր էր ընդամենը մի գրասեղան, մի գրիչ և մի թղթի կտոր

ՏԵՂԵԿԱԳՐԱՎՈՐԱԿԱՆ ՖԵՂԵՐԱՑԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Ն. Ադամյանի ներկայությամբ

Նոյեմբերի 18 հայտնի.

Ասուլիսին ներկայացան Գերագույն խորհրդի նախագահ Ն. Ադամյանը, Գերագույն դատարանի նախագահ Ս. Լուսինյանը, Գլխավոր դատախազ Ս. Ղազարյանը, Գերագույն տնտեսական խորհրդի նախագահ Ա. Ալեքսանդրովը, Գերագույն դատարանի դատավորներ Ս. Ասլանյանը, Ս. Ասլանյանը, Ս. Ասլանյանը,

զունգի հետ, որ նրանք ունեն հրէաների վերաբերմամբ, այն է՝ «бей жидовъ».

Պարոն Грузинъ-ը այս բնորոշումից զայրացած՝ իր արշաւանքը արդարացնում է նրանով, որ մինչ ռուս հասարակութիւնը ծայրայեղ աջակողմեանների մինչև Պլէխանովը չեն գտնում, որ

Ռուս ժողովուրդը և ռուս պետութիւնը պարտաւոր են կռուել Ռուսաստանում հետզհետէ աւելի ուժեղացող գերմանական կապիտալիզմի և գերմանական արդիւնաբերութեան դէմ, և ռուս ժողովրդի հասարակական կեանքի լծուելը չը դադարակեցնելու— կռիւ գերմանական ճնշման դէմ։

Եզրակացութիւնը պարզ է։ Պարզ է նաև պ. Грузинъ-ի արշաւանքի նպատակը։ Վերջապէս նա խօսեց բաց կերպով։

Նա էլ ուրեմն իրան լծուելիք է ընդունել կռուել հայերի կապիտալիզմի և արդիւնաբերութեան զարգացման դէմ Կովկասում։

Այդ իրա կամքն է։

Սակայն մի բան չենք կարող չը նկատել, որ նա ինչպէս է հնարաւոր գտնում պատերազմի մէջ գտնվող պետութիւնների յարաբերութիւնները համեմատել երկու հարևան, մի պետութեան հպատակ, ժողովուրդների փոխ-յարաբերութեան հետ։

Սա առ նուազն անհեթեթութիւն է։ Անհեթեթ է մանաւանդ այն, որ պ. Грузинъ-ը Պլեխանովին յայտարարում է կապիտալիզմի դէմ կռուող։

Շովինիստական երակայութիւնն և տրամաբանութիւնը աւելին չէին կարող արտադրել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՉԵԱՆ

Թիֆլիս, 17 Նոյեմբերի

Ամսիս 12-ին պատահաբար անցնում էի Երուսալիմսկայա փողոցով, որտեղ գտնվում է Հայկ. Կենտ. Կոմիտէի գրասենեակը, որի առաջ խռնված էր մեծ բազմութիւն փաստաթղթերի։ Հետաքրքրվեցի խմբվելու պատճառն իմանալուս։ Պատասխանեցին, թէ եկել են նպաստ ստանալու։ Գրասենեակի երկու դռների առաջ միմեանց հրելով իւրաքանչիւրը աշխատում էր առաջ ընկնել, շուտ ստանալ, որով աւելի ուշացնում էր բաշխումը։ Գրքոյկները ձեռներից խլվում շտապվում էին հեռու, կարգապահութիւնը բացակայում էր։ Մօտեցաւ մէկ կին գրքոյկի վրա դրած 1 ռուբլի թղթադրամ. հարցրի՝ քանի օրվայ մնդադրամ է ստացածը։

— Ութ օրվայ,—հղաւ պատասխանը։

— Ինչպէս, քանի հոգու համար։

— Երկու,—պատասխանում է։

Չեմ հաւատում լսածիս. բացում եմ գրքոյկը. նշանակված է՝ «Նոյեմբերի 7—12-ը 1 ռուբլի երկու հոգու համար»։ Ճիշդ է. հինգ օրվանը 1 ռուբլի է։

— Չէ. քի մեռնիմ, էսա ութ օրվայ խամար է. ընցած խինդշաբթի էլման մէկ մանէթ տուին գիս էսօր խինդշաբթի է, ութ օր կէնի. չեմ խափի, ապգ շէն կենայ, մէկալոնց էլ ըզկնայի։

Նայեցի ուրիշների գրքոյկներին, մօտ 8—10 հոգու. ճիշդ նոյնը. գրված է 5 օրվայ հաշիւ, բայց ութ օրից յետոյ է սըրվում նպաստ։

Ուրեմն այն երեք օրը ինչով են ապրում։ Այդ իրաւացի հարցին նպաստ բաժանողները պարտաւոր են բացատրութիւն տալ։ Ութ օրվանը պիտի ստանան իւրաքանչիւրը 80 կ., հաշուելով օրը 10 կ., այլ ոչ 60 կ., ինչպէս այդ կատարվում է։ Անցորդ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԱԶԳ. ՊԱՇՏ. ՄԻՈՒԹ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի Ազգ. Պաշտ. Միութիւնը հոկտեմբեր 23-ին իր հաւաքական նիստին մէջ հետեւեալ որոշումները տուաւ.

ա) Կարգացուեցաւ Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին օրհնութեան հեռագիրը։

«Ստացած ենք Նուպար-փաշայի հեռագիրը. կօրհնենք Ազգ. Պաշտ. Միութիւնը։ Կը մաղթենք կատարեալ յաջողութիւն ձեռնարկուելիք հանգանակութեան համար ի նպաստ Հայաստանի զոհերուն։ Վստահ ենք Ամերիկայի հայոց մարդասիրական զգացումներուն վրայ։

«Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց»

բ) Առաջնորդ սրբազան հայրը ժողովին հաղորդած էր Դաշնակցութեան Ամերիկայի Կեդր. Կոմիտէին հետ իր բանակցութիւններն ու Կոմիտէին վերջին նամակը ի մասին ամերիկահայ համերաշխութեան իրենց ևս մասնակցութեան։ Ժողովս ուրախութեամբ դիտեց, որ Հ. Յ. Դաշնակցութիւնն ալ սկզբունքով կընդունի հայ կուսակցները, կարօտեալներու ի նպաստ և դիւանագիտական ձեռնարկներու համար Միութեանս ընդդիմակայ գործունէութեան կարեւորութիւնը, և նկատելով որ ներկայ ստիպողական պարագաներու բերումով համերաշխութեան համար թղթակցութիւններով բանակցութիւն աւելորդ յապաղումներու տեղի կուտայ, որոշեց խնդրել նորին գերապատուութենէն, որպէս զի Կեդր. Կոմիտէին յանձնարարէ երկու լիազօր ներկայացուցիչներ կարգել, որոնց հետ Միութիւնս ուղղակի բանակցի համերաշխութեան մասին և կարելի ըլլայ վերջնական եզրակացութեան մը յանգիլ։

գ) Այլեայլ կողմեր հայերու մէջ տեղի ունեցած դրամահաւաքութեանց մասին առնուած լուրերուն վրայ, որոշուեցաւ դիմել մը հրատարակել և յիշել անունը ամերիկեան և հայ մարմիններուն, որոնք իրաւունք ունին դրամ հանգանակելու։

դ) Ցարաբերական և Հանգանակիչ Յանձնախումբին հետեւեալ առաջարկը ընդունուեցաւ.

«Ընդունիլ երկու շրջանակ, արեւելեան նահանգները և միջին ու արեւմտեան նահանգները, և գործիչներ ղրկել իւրաքանչիւրին թէ ամերիկեան և թէ հայ շրջանակներու մէջ գործելու, կազմակերպելու և հանգանակութեանց համար»։

Այս որոշման գործադրութիւնը յանձնուեցաւ Ցարաբերական և Հանգանակիչ Յանձնախումբին։

Ազգ. Պաշտ. Միութիւն Ամերիկայի
(«Կոչնակ»)

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍՈՒՍԲԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4 » Բաղու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6 (արագ) »	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9 » Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
» Ջուլֆա	8 ժ. 53 ր.	երեկ.
» Բորժոմ	3 ժ. 20 ր.	ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բաղուից	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4 Բաթումից	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5 Բաղուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ
№ 10 Բաթումից	9 ժ. 51 ր.	առաւ.
Ջուլֆայից	8 ժ. 11 ր.	առաւ.
Բորժոմից	7 ժ. 25 ր.	առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Զօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ՍԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբերութեամբ և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղեկային և երեխայոց հիւանդութ. և ծանկահաս.։
Մ. Մ. ԲԵՆԻՄՈՎԻՉ—11—13 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ս. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—12—1 ժ. երեչ., հինդշ. և շաբաթ. երեկայոց ներքին և հիւ. և ծանկահաս.։
ԻՐԵՊՈՆՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻՄՈՎԻՉ—6—7 ժ.
Գնաները 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—208

ԲԺԻՇԿ
Ի. ԵԱ. ԳՕԿԻԷԼՕՎ
(Նախկին օրդինատոր Կոլինկինեան հիւանդ. Պետրօգրադում)
Ընդունում է հիւանդներին վեներական, սիֆիլիս, կաշուի եւ ջրային հիւանդութիւններից։
Ամեն օր՝ առ. ժամը 9½—13. երբ. » 5—7½.
Հասցէն՝ Միխայլովկի պր. № 113.
(օ. մ.) 801. 12—11

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ
Կիրակի օրը, պատարագից յետոյ, ժամը 12-ին Թադէոսեան ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ շարունակութիւն։
Օրակարգն է.
2 Հոգաբարձուի, 2 անձնափոխանորդի ընտրութիւնը և ընթացիկ հարցերը։
866. 1—1 ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Նպաստամատոյց Ընկերութեան
գրասենեակում վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ
Լինդ—Арменія շքեղ հր. 2 հատ. գ. 18 ր.
1906 և 1909 թ.թ. Դեղունի, շքեղ հրատ. իւրաքանչիւրի գինն է 3 ր.
Բժ. Վ. Արծրունի—Պատրանք, վէպ. 1 ր.
» Մատնիչ, պատմուածք 40 կ.
Շիրվանզադէ—Ցաւազարը եւ ջնորդի ականջը, պատմուածքներ (հեղինակի կենսագրութեամբ և պատկերով). 50 կ.
» Ժողովածու երկերի I, II, III, և IV հատոր ամեն մինի գինն է 1 ր. 50 կ.
Մ. Алавердянъ—Идеологи освобожденія турецкихъ ярмянъ 40 կ.
Ив. Гнуни—Мотивы армянской поэзіи 40 կ.
Ив. Саркисянъ—Армянск. литература 60 կ.
Վարդան Քամալեան—Հառաչանք (երկրորդ տպագրութիւն) 30 կ.
Բ. Իշխանեան—Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա քաղաքական-յարաբերութիւնները 25 կ.
Սպասնական պատկերներ հատ 50 կ.
Գր. ա.-ք. Մանդակունի—Հանրամատչելի բժշկարան (բժշկապետ Լէսաէնի բժշկարանից կազմած). 1 ր.
Ս. Դանիէլ-Բէկ—Կանանց հարցը 20 կ.
Ա. Քիշմիշեան—Վարդավառ, դր. 2 արարուածով. 20 կ.
Զարքաշ—Զատկական զառներ 10 կ.
Ա. Աթայեան—Սիրոյ հովիտը 3 կ.
Յիշեալ բոլոր հրատարակութիւնները միասին պահանջողներին կը լինի զեղչ 25%։
Մինչև 1 ռուբլի գումարի գրքերի ճանապարհածախսը Ընկ. վրա։
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «ՀԱՅԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ» (Соломоновская, 21).
(օ. մ.) 244. 15—11

ՎԵՐՋ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻՆ
ՏՐԻՊԵՐԻ (սուսունակ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Սուսունակը մի քանիսի կարծիքով անբուժելի հիւանդութիւն է, իսկ մի մասի էլ՝ թէև բուժելի, բայց պահանջում է երկար ու ձիգ ժամանակ և նիւթական մեծ ծախք, բացի բարոյական տանջանքներից։ Այժմ այդ հիւանդութիւնը ըստ ժշկվում է երեք շաբաթվայ միջոցում «Ռապիդ» միջոցով, որ ես եմ հնարել և թոյլ է տրված բժշկական խորհրդով № 1295 վկայագրով։

Այս միջոցը հինգ տարվայ ընթացքում բուժել է մի քանի հազար հիւանդների և մեծ անուն հանել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Բայց մինչև այժմ էլ կան հիւանդներ, որոնք կասկածով են վերաբերվում իմ յայտարարութեանց։

Այս կասկածանքը բնական է, օրավհետև վերջին մի քանի տարիներում այնքան «հրաշագործ» դեղեր են ի վաճառ հանվել, որոնք շուտափոյթ բուժումն են խոստանում, որ հիւանդը կարդալով յայտարարութիւնները ոչ միայն դժուարանում է դրանցից ընտրել, այլ և սկսում է կասկածել նրանց տուած խոստումների վերաբերմամբ։

Դուցէ շատ հիւանդներ փորձել են մի քանի դեղեր և՝ զուցէ՝ հիասթափվել նրանց ներգործութեան ու խոստումների վերաբերմամբ, բայց դա չէ նշանակում, որ բոլոր դեղերն էլ այդպէս են։ Իմ առաջարկած միջոցը երեք շաբաթվայ ընթացքում բուժում է այս հիւանդութեանը ամենանշանակ տեսակը։

Հինգ տարվայ ընթացքում ես ստացել եմ մեծաքանակ շնորհակալական նամակներ։ Այս նամակների իսկականները պահվում են ինձ մօտ և ցանկացողները կարող են միշտ էլ տեսնել։ Այս նամակների իսկութեան համար ես պատասխանատու եմ և դրանց կեղծութիւնը ապացուցանելու դէպքում ես պատրաստ եմ վճարել 1000 ր., որեւէ բարեգործական նպատակով։

Մեծարգոյ պ. Դէլամուրէ! Շտապում եմ ձեզ յայտնել, որ ձեզանից ստացված 2 սրուակ «Ռապիդը» օգնեց ինձ բժշկվելու հոնօրէիից, որից 10 տարի շարունակ տանջվում էի։ Ես անալիզի ենթարկել տալով մէզս՝ նկատվեց, որ գոնոկոկ նրա մէջ այլ ևս չը կայ։ Այժմ ես ինձ կատարելապէս առողջ եմ զգում, որի համար ձեզանից շատ շնորհակալ եմ և ցանկանում եմ Աստուծուց ձեզ առողջութիւն և երկար տարիներ։ Մնում եմ յարգանքով Ն. Մ. Արլիխպով։ Պետրօգրադ։

Երկու երկնակի սրուակի և մի արկղիկ պիլիւլների (լրիւ բժշկվելու կուրսը) գինն է 9 ռուբլի։ Վերադիր վճարով և ճանապարհածախսով 10 ռուբլի։ Վերադիր վճարով ուղարկվում է 3 ր. կանխավճար ստանալուց յետոյ։

Պատուէրները հասցէագրել միմիայն.
Въ Кавказское отдѣленіе Московской лабораторіи М. Деламурэ, Тифлисъ, Эриванск. пл., Пушкинская, 3, отд. 2/М, верхній этажъ, противъ Городской Управы, д. Кредитнаго О-ва.
Հեռագրական հասցէն՝
Тифлисъ—Американецъ.
(4.) 609. 50—13

174. 0—71
ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рецепт. бр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.
(5. 4.)

760. 50—11
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3, ВЕРХНІЙ ЭТАЖЪ
(5. 2.)

ՕԳՏՎԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆԴՈՑ
(Իմ գեղարուեստական արհեստանոցի գործի հետ ծանօթանալու համար, կարճ ժամանակով նշանակում եմ սովորական գներից կէսը, ամենքին մատչելի անելու)։
Սեռացնում եմ փոքր լուսանկարները ամենաճիշդ սեռ. թանաքով
ԴԷՄՔԵՐ
ԻՐԱՆՆԵՐՈՎ Ն ԻՏԱԼԱԿԱՆ ՍՏԻ ՍԵՌ. ՏՈՎ.
(Ջրեղ պասպարտու